

Համագործակցությամբ՝



**«Տեխնոլոգիաները՝ ոչ տեխնոլոգիական ոլորտներում» ծրագիր կին
ձեռներեցների համար**

Համաշխարհային բանկի խմբի անդամ Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) «Կանանց ձեռներեցությունը Հայաստանում» ծրագիրը մեկնարկում է **«Տեխնոլոգիաները՝ ոչ տեխնոլոգիական ոլորտներում» ծրագիրը կին ձեռներեցների համար:**

Միջազգային ֆինանսական կորպորացիան (IFC), ճապոնիայի կառավարության հետ համագործակցելով, նոր նախաձեռնությամբ կօգնի բարելավել Հայաստանում կին ձեռներեցների տնտեսական արդյունքները՝ զարգացնելով նրանց բիզնես հմտությունները և հասանելի դարձնելով բիզնես ցանցերը:

Ծրագիրն իրագործվում է **«CIVITTA Armenia»** ընկերության միջոցով:

ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հատուկ մշակված ծրագիրն օգնելու է ոչ տեխնոլոգիական ոլորտներում գործունեություն իրականացնող կին ձեռներեցների հնարավորությունների ընդլայնմանը և արդյունքների զարգացմանը՝ համապատասխան գիտելիքներ և տեխնոլոգիական լուծումներ կիրառելու միջոցով:

Ծրագրի մեջ ընդգրկված կին ձեռներեցները կմասնակցեն բիզնեսի, ձեռներեցության, ինովացիաների ու տեխնոլոգիաների, ինչպես նաև մարկետինգի և հարակից ոլորտների լավագույն մասնագետների կողմից իրականացվող դասընթացներին և միջոցառումներին:

Ծրագիրը բաղկացած է երեք փուլից՝

I-ին փուլ

«Անձնական նախաձեռնություն» դասընթաց՝ ուղղված բիզնես մտածելակերպի ստեղծմանը և զարգացմանը, ինչպես նաև բիզնես սկսելու և այն մեծացնելու հոգեբանական խոչընդոտների հաղթահարմանը:

Տևողություն՝ 1 շաբաթ

**Լավագույն արդյունք ցուցաբերած մասնակիցները կանցնեն հաջորդ փուլ:*

II-րդ փուլ

Գործնական բուրքեմփի ընթացքում մասնակիցները կուսումնասիրեն գաղափարների ձևավորման և փորձարկման, թիմերի ձևավորման և ծրագրերի ներկայացման հմտություններ՝ տեխնոլոգիական և բիզնես ոլորտի լավագույն մասնագետների օգնությամբ:

Տևողություն՝ 10 օր

**Լավագույն արդյունք ցուցաբերած մասնակիցները կձևավորեն թիմեր և կանցնեն հաջորդ փուլ:*

III-րդ փուլ

Աքսելերացիայի ընթացքում նոր ձևավորված թիմերը կանցնեն բիզնեսի գրանցման, զարգացման, ընդլայնման և միջազգայնացման, ֆինանսավորման հնարավորությունների ներգրավման և բարդ իրավիճակներում փոփոխությունների կառավարման դասընթացներ՝ ոլորտի լավագույն մասնագետների մասնակցությամբ:

Տևողություն՝ 15-շաբաթ

Լավագույն թիմերը «CIVITTA Armenia» կազմակերպության կողմից կստանան **1 միլիոն ՀՀ դրամ դրամաշնորհ**՝ բիզնեսը գրանցելու և գաղափարները զարգացնելու համար:

ՈՎՔԵ՞Ր ԿԱՐՈՂ ԵՆ ԴԻՄԵԼ

Ծրագրին կարող են դիմել Երևանի և ՀՀ բոլոր մարզերի այն կին ձեռներեցները, որոնք համապատասխանում են հետևյալ բոլոր չափանիշներին.

- ունեն **տեխնոլոգիական գաղափարներ ցանկացած ոլորտի համար,**

- ցանկանում են ստեղծել և զարգացնել իրենց բիզնեսը,
- նախկինում չեն մասնակցել նմանատիպ ծրագրերին,
- պատրաստ են մասնակցել բոլոր փուլերին՝ դրանք հաջողությամբ հաղթահարելու դեպքում:

ԻՆՉՊԵՍ ԴԻՄԵԼ

Ծրագրին կարող եք դիմել մինչև **սույն թվականի ապրիլի 18-ը ներառյալ** հետևյալ հղմամբ՝ <https://forms.gle/j53oeYzPJhrB8NUW6>

Ընտրվելու են առավել մրցակցային և տեխնոլոգիական լուծումներ ունեցող գաղափարների դիմորդները:

Հարցերի դեպքում խնդրում ենք գրել info.am@civitta.com էլ. հասցեին կամ զանգահարել՝ +374 (10) 54 64 34 հեռախոսահամարով:

